ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ 5-ՐԴ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ, ԴՐԱ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՋԱՆՔԵՐԻ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ք. Երևան **11.05.2023թ.**

Իրավաբանների հայկական ասոցիացիան (այսուհետ՝ նաև ԻՀԱ), ի դեմս Ասոցիացիայի նախագահ Կարեն Զաղոյանի,

Իրավունքի Եվրոպա միավորումը (այսուհետ՝ նաև ԻԵՄ), ի դեմս Միավորման նախագահ Լուսինե Հակոբյանի,

Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միությունը (այսուհետ՝ նաև ՀԱԳՄ), ի դեմս Միության նախագահ Արսեն Ղազարյանի,

(այսուհետ՝ բոլորը միասին Կողմեր),

- *հիմք ընդունելով և զարգացնելով Կողմերի միջև հակակոռուպցիոն ոլորտում առկա համագործակցությունը,*

- *հաշվի առնելով, որ հակակոռուպցիոն կրթության, կոռուպցիայի կանխարգելման և կոռուպցիայի հակազդման արդյունավետությունը մեծապես պայմանավորված է նաև քաղաքացիական հասարակության մասնակցությամբ և ջանքերի համախմբմամբ,*

- *կարևորելով հակակոռուպցիոն ոլորտի շարունակական բարեփոխումների իրականացումը, կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային իրավական փաստաթղթերով, այդ թվում Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական Միություն Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով (այսուհետև՝ ՀԸԳՀ) նախատեսված ու միջազգային լավագույն փորձից բխող կառուցակարգերի ներդրումն ու գործողությունների իրականացումը, որպես քաղաքական և վարչական կոռուպցիայի նվազեցման արդյունավետ գործիքներ և հասարակական վերահսկողության կառուցակարգեր,*

- *անհրաժեշտ համարելով հակակոռուպցիոն ոլորտում քաղաքականության մշակման, մշտադիտարկման և գնահատման համար լիազոր մարմնին՝ ՀՀ արդարադատության նախարարությանը հակակոռուպցիոն 5-րդ ռազմավարության մշակման աշխատանքներում մասնագիտական փորձագիտական աջակցության տրամադրումը,*

- *ցանկանալով ամրապնդել և զարգացնել համագործակցությունը հակակոռուպցիոն կրթության, կոռուպցիայի կանխարգելման և հակազդման ոլորտներում,*

սույն Համագործակցության համաձայնագրով (այսուհետ՝ Համաձայնագիր) Կողմերը համաձայնվեցին հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1
Համաձայնագրի նպատակները

Կողմերի համագործակցությունը իրականացվում է հետևյալ նպատակներով.

- համախմբել քաղաքացիական հասարակության հավաքական ջանքերը Հակակոռուպցիոն 5-րդ ռազմավարության մշակման, դրա իրականացման, իրազեկման և մշտադիտարկման ու գնահատման նպատակով,
- նպաստել Հայաստանի Հանրապետությունում հակակոռուպցիոն կրթության իրականացմանը, կոռուպցիայի կանխարգելմանը՝ հանրային և մասնավոր ոլորտներում, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը,
- աջակցել Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը,
- բարձրացնել քաղաքացիների՝ կոռուպցիայի դեմ պայքարի անհրաժեշտության, այդ պայքարի միջոցների և արդյունքների վերաբերյալ իրազեկության մակարդակը,
- նպաստել կոռուպցիայի դեմ պայքարում ֆիզիկական և իրավաբանական անձանց շահերի և իրավունքների պաշտպանությանը,
- նպաստել Հակակոռուպցիոն 5-րդ ռազմավարությամբ նախատեսված հակակոռուպցիոն բարեփոխումների իրականացմանը, այդ թվում կոռուպցիոն ռիսկեր և օրենսդրական բացեր պարունակող օրենսդրության ընթացակարգային և համակարգային փոփոխությունների կատարմանը:

ՀՈԴՎԱԾ 2
Համագործակցելու ընդհանուր պարտավորությունը

Կողմերը համագործակցություն են իրականացնում ՀՀ Սահմանադրության, ՀՀ օրենսդրության, ՀՀ միջազգային պայմանագրերի և սույն Համաձայնագրի դրույթների հիման վրա՝ գործելով իրենց իրավասության շրջանակներում և առաջնորդվելով հրապարակայնության, օրինականության և ինքնուրույնության սկզբունքներով:

ՀՈԴՎԱԾ 3
Համագործակցության հիմնական ուղղությունները և ձևերը

Կողմերը համաձայնվում են համագործակցել հետևյալ ուղղություններով և ձևերով.

- համակարգել աշխատանքները և դիրքորոշումները Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդում և Հակակոռուպցիոն 5-րդ ռազմավարության մշակման աշխատանքային խմբում.
- ՀՀ արդարադատության նախարարությանը տրամադրել հակակոռուպցիոն ոլորտի փորձագիտական աջակցություն Հակակոռուպցիոն 5-րդ ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների (գործողությունների) ծրագրի, ինչպես նաև դրանցից բխող կառուցակարգերի, իրավական ակտերի մշակման գործում,

- իրականացնել Հակակոռուպցիոն 5-րդ ռազմավարության և դրանից բխող հակակոռուպցիոն բարեփոխումների, գործողությունների և կառուցակարգերի իրագեկման աշխատանքները,

- իրականացնել Հակակոռուպցիոն 5-րդ ռազմավարության և դրանից բխող հակակոռուպցիոն բարեփոխումների, գործողությունների և կառուցակարգերի այլընտրանքային մշտադիտարկումներն ու գնահատումը, հրապարակել դրանց այլընտրանքային զեկույցները.

- իրականացնել կոռուպցիայի դեմ պայքարում Կողմերի անդամների և շահառուների շահերի և իրավունքների պաշտպանությունը,

- կազմակերպել հակակոռուպցիոն ոլորտի ուսուցումներ, սեմինարներ, աշխատանքային քննարկումներ, համաժողովներ, գիտաժողովներ և մասնագիտական այլ միջոցառումներ,

- մշակել և հանրայնացնել հակակոռուպցիոն ոլորտի նորարար և մատչելի մեդիա արտադրանքներ, իրականացնել հակակոռուպցիոն արշավներ:

ՀՈԴՎԱԾ 4
Համագործակցության այլ ձևերը

Կողմերը համաձայնվում են, որ սույն Համաձայնագիրը չի բացառում համագործակցության այլ ձևերի հնարավորությունը, որոնք նշված չեն Համաձայնագրում, բայց համապատասխանում են նրա նպատակներին:

ՀՈԴՎԱԾ 5
Համագործակցության զարգացումը

Սույն Համաձայնագիրը կողմերին չի խոչընդոտում սահմանելու և զարգացնելու համագործակցության փոխադարձորեն ընդունելի այլ ուղղություններ և ձևեր՝ պահպանելով սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածով նախատեսված պայմանները:

ՀՈԴՎԱԾ 6
Համագործակցության համակարգումը

Սույն Համաձայնագրով սահմանված համագործակցությունը համակարգում և վերահսկում են Կողմերի ղեկավար մարմինները՝ լիազորված անձանց միջոցով:

ՀՈԴՎԱԾ 7
Փոփոխություններ և լրացումներ

Սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ միայն Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ, որը կդառնա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

ՀՈԴՎԱԾ 8
Տարաձայնությունների կարգավորում

Տարաձայնությունները, որոնք կարող են առաջանալ սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման կապակցությամբ, լուծվում են Կողմերի միջոցով՝ խորհրդատվությունների և բանակցությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 9
Եզրափակիչ դրույթներ

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Սույն Համաձայնագրի գործողությունը Կողմերից յուրաքանչյուրի համար կդադարեցվի այդ Կողմի՝ համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր որոշման մասին մյուս Կողմերին գրավոր ծանուցելուց երկու ամիս հետո: Ծանուցման եղանակ է հանդիսանում Կողմերի ստորև նշված էլեկտրոնային և/կամ փոստային հասցեները.

1. Իրավաբանների հայկական ասոցիացիա, փոստային հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 7, գրասենյակ 2, էլեկտրոնային հասցե՝ info@armla.am
2. Իրավունքի Եվրոպա միավորում, փոստային հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Եկմալյան 7, բն. 6, էլեկտրոնային հասցե՝ europeinlaw@gmail.com
3. Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն, փոստային հասցե՝ Սայաթ-Նովայի պող., 19 շենք («Անի պլազա հոթել»), Բիզնես հարկ, գրասենյակ N 3, էլեկտրոնային հասցե՝ info@umba.am

Սույն Համաձայնագիրը ստորագրվել է Երևան քաղաքում 2023 թվականի մայիսի 11-ին, կազմված է 4 էջից, հայերեն լեզվով, հավասար իրավաբանական ուժ ունեցող երեք օրինակներից:

Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ	Իրավունքի Եվրոպա միավորման նախագահ	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության նախագահ
Կարեն Զաղոյան	Լուսինե Հակոբյան	Արսեն Ղազարյան